

ք. Գավառ

«26» դեկտեմբերի 2012թ.

«Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունն՝ ի դեմս ռեկտոր Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի և «Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի» պետական ոչ առևտրային կազմակերպությունն՝ ի դեմս տնօրեն Հրաչյա Գարեգինի Գրիգորյանի (այսուհետ՝ Կողմեր), համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի և ՀՀ կառավարության 16.11.2006թ. թիվ 1760-Ն որոշումից բխող՝ «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու կարգի», ՀՀ կրթության և գիտության նախարարի 09.03.2007թ. N 137-Ա/Ք հրամանի՝ կնքում են սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Գավառի պետական համալսարանում Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի կողմից երաշխավորված շրջանավարտները կարող են ուսումը շարունակել հետևյալ մասնագիտությունների գծով և առկա և հեռակա ուսուցման համակարգերում.

- 1) 030500 Իրավագիտություն
- 2) 080300 Ֆինանսներ
- 3) 080600 Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում
- 4) 081500 Հաշվապահական հաշվառում
- 5) 100100 Սերվիս

2. Կողմերը համաձայնվում են՝

2.1. Իրականացնել բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր Գավառի պետական համալսարանում ուսուցանվող այն մասնագիտություններով, որոնց գծով թույլատրվում է միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթության շարունակումը բարձրագույն ուսումնական հաստատություններում:

2.2. Համագործակցել՝ համապատասխան մասնագիտությունների գծով ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և կատարելագործման նպատակներով:

3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4. Պայմանագիրը կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները և ստորագրությունները.

«Գավառի պետական համալսարան»



ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1
Էլ. փոստ՝ info@gsu.am
www.gsu.am
Fax: +374 10 28-20 75
հեռ. 010 28 20 75, 0264 2 57 75

Ռեկտոր՝  Ռ. Խ. Հակոբյան

«Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ»



ք. Երևան, Մոլլոդկական 37ա
Էլ. փոստ՝ n2college@mail.ru
հեռ. 0374 10 67 25 60
0374 10 67 23 01
0374 10 67 27 90

Տնօրեն՝  Հ. Գ. Գրիգորյան